ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԽՍ-109²-05.09.2019-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 08-ի ՀՕ-171-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 59-րդ հոդվածի 14-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Այդ դեպքում ծառայողին շարունակում է վճարվել աշխատավարձ:»:

Հոդված 2.

Օրենքի 67-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար» բառերը:

Հոդված 3.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Խ-109²-05.09.2019-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 08-ի ՀՕ-171-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 59-րդ հոդվածի 14-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Այդ դեպքում ծառայողին շարունակում է վճարվել աշխատավարձ:»:

Հոդված 2.

Օրենքի 67-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար» բառերը:

Հոդված 3.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից~~պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը~~:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (*Խ-109*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	***Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը***	***Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)***	***Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը***	***Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը***
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	*(…) խմբագրել և համապատասխանեցնել Օրենքի վերոնշյալ մասի պահանջներին՝ «կասեցման ժամանակահատված ում» բառերը «ժամանակավորապես դադարեցման ժամանակահատված ում» բառերով փոխարինելու միջոցով*	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն	Ընդունվել է
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Փաթեթում ընդգրկված նախագծերի անցումային դրույթներ	*(…) նախագծերի 3-րդ հոդվածների դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջներին*	Ընդունվել է, կատարվել են փոփոխություններ	Ընդունվել է